ԳԵՆԵՐԱԼ – ԼԵՅՏԵՆԱՆՏ ՄՈՎՍԵՍ ՍԻԼԻԿՅԱՆ
(Կենսագրության անհայտ էջեր)

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ներկայացուցիչների միջև ստորագրվում է համաձայնագիր, որով Հայաստանը դառնում է խորհրդային: Այդ համաձայնագրով իշխանությունը հանձնվում է Հայաստանի ռազմական հեղափոխական կոմիտեին, որը գլխավորում է Սարգիս Կասյանը:

Սակայն, խախտելով դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը, բոլշևիկները սկսում են բռնություններ: Ձերբակալվում են ՀՀ նախկին կառավարության, սոցիալիստական կուսակցությունների անդամներ, բարձրաստիճան զինվորականներ և ուրիշներ: Զինվորականների ձերբակալությունները շարունակվում են նաև 1921 թ. հունվարին: Նրանց ստիպում են Երևանից ոտքով անցնել 170 կմ ճանապարհ մինչև Աղստաֆա, որտեղից գնացքով տեղափոխում են Բաքու, ապա Ռյազանի համակենտրոնացման ճամբար[1]:

Ձերբակալվածների թվում էր ազնվական, Սարդարապատի ճակատամարտում հայկական զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանը (Մոիսեյ Սիլիկով, 1862 թ. սեպտեմբերի 12 – 1937 թ. նոյեմբերի 22):

Պատմագիտական գրականության մեջ հիմնականում նշվում է, որ Մ. Սիլիկյանն ազգությամբ եղել է հայ: Քչերին է հայտնի, որ նա ազգությամբ ուտի է[2]: Գեներալը ծնվել է Ելիսավետպոլի նահանգի Նուխի գավառի Վարդաշեն գյուղում և հավատով եղել է Հայ առաքելական[3]: Նրա կինն էր Նատալյա Ալեքսանդրովնան, իսկ որդին՝ Գեորգին, մասնագիտությամբ ինժեներ էր[4]:

1882 թ. օգոստոսի 28-ին Մ. Սիլիկյանն ընդունվել է Մոսկովյան II զինվորական գիմնազիան, որն ավարտել է 1884 թ. օգոստոսի 14 – ին՝ ենթապորուչիկի կոչումով:

---

[1] *Վ. Ն. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն. Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, էջ 36–37:*

[2] *1935 թ. նոյեմբերի 29-ին ՀԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (ՆԳԺԿ) պետական անվտանգության վարչությունում տված ցուցմունքում Մ. Սիլիկյանը պարզաբանել է, թե ինչու է որոշ դեպքերում ազգությունը նշել հայ [«քանի որ չէին հասկանում, թե ինչ ազգ է ուտին». տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1191, ց. 1, գ. 1124, թ. 6]: Հարցաքննության արձանագրության «Ընտանեկան դրությունը» բաժնում նշված է ոմն Կոնստանտին Ալեքսանդրի Զդանովսկի: Քրեական գործում նշված անձի վերաբերյալ այլ տեղեկություն չկա (տե՛ս նույն տեղում, թ. 5): Ուտիների ծագումնաբանության մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Ռ. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Ակնարկ Ուտի ազգաբնակչության պատմության.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2003, -1, էջ 93–98:*

[3] *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ, 1124, թ. 6:*

[4] *Նույն տեղում, թ. 5:*

Ապա ավարտում է Ալեքսանդրովյան III զինվորական ուսումնարանը և սպայական շինարարական դպրոցը[5], որից հետո նշանակում է ստացել Կարսում տեղակայված Կուբանյան 155-րդ գնդում որպես վաշտի հրամանատար:

1914 թ. Մ. Սիլիկյանին շնորհվել է գնդապետի աստիճան[6]: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատի մարտական գործողություններին: Եղել է Կովկասյան VI հրաձգային գնդի հրամանատար, որը գործել է գեներալ Թովմաս Նազարբեկյանի (Ֆոմա Նազարբեկով, 1855–1931 թթ.) Կովկասյան II հրաձգային բրիգադի կազմում: 1915 թ. նոյեմբերին բրիգադը վերակազմավորվում է հրաձգային դիվիզիայի:

Ռուս-թուրքական ռազմաճակատում Մ. Սիլիկյանի մղած մարտերի մասին մեր ունեցած տեղեկությունները սակավ են: Դրանք գլխավորապես պահպանվել են գեներալ Թ. Նազարբեկյանի հուշերում և նրան գրած Մ. Սիլիկյանի նամակներում, որոնց քաղվածքները գտնվում են Թ. Նազարբեկյանի անձնական արխիվում:

Պատերազմի սկզբում Կովկասյան VI հրաձգային գունդը II հրաձգային բրիգադի կազմում մարտական գործողություններ է մղում Հյուսիսային Պարսկաստան ներխուժած թուրքական զորամասերի և համիդեական գնդերի դեմ: Հակառակորդին Պարսկաստանի հյուսիսային շրջաններից ետ մղելուց և Դիլմանի ճակատամարտում (1915 թ. ապրիլի 18-19) Խալիլ բեյին պարտության մատնելուց հետո գեներալ Թ. Նազարբեկյանին հանձնարարվում է հետապնդել Խալիլի ուժերին: 1915 թ. մայիսի 9-ի դրությամբ Մ. Սիլիկյանի գունդն ապահովում էր բրիգադի ձախ թևը քրդական հնարավոր հարձակումներից[7]: Իսկ հունիսի 28-ին գունդը հրաման է ստանում անցնել Դերիկ գյուղը, որտեղ գտնվում էր IV կորպուսի շտաբը[8]:

1915 թ. դեկտեմբերին Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ն. Յուդենիչը սկսել էր Էրզրումի (Կարին) գրավման նշանավոր օպերացիան: Թ. Նազարբեկյանի դիվիզիան և նրա կազմում գործող VI հրաձգային գնդի առջև

---

[5] Г. А в е т и с я н. Генералы-армяне в Российской империи. Ереван, 2008, с. 181–182. *Ըստ Մ. Սիլիկյանի 1935 թ. նոյեմբերի 29-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ պետական անվտանգության վարչությունում տված ցուցմունքի՝ 1904 թ. ավարտել է Օրանիենբաումի (Լոմոնոսով) սպայական հրաձգային դպրոցը կապիտանի կոչումով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 1124, թ. 6 շրջ.):*

[6] Г. А в е т и с я н. *Նշվ. աշխ., էջ 181:*

[7] *ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 59 շրջ.:*

[8] *Նույն տեղում, գ. 3, թ. 4:*

դրված էր մարտական առաջադրանք՝ ապահովել օպերացիայի գաղտնիությունը, մատակարարման և հաղորդակցության ուղիները թուրք-քրդական հարձակումներից:

1916 թ. հունվարի 5-ին գնդապետ Մ. Սիլիկյանը Թ. Նազարբեկյանին ուղղած զեկուցագրում հայտնում է, որ գունդը հասել է Դայար և զբաղեցրել դիրքեր[9]: Հունվարի 10-ին Կովկասյան I բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Կալիտինի հրամանով VI գունդը՝ մեկ մարտկոցով, արագացված երթով Ալաշկերտի հովտից շարժվում է Էրզրում՝ մասնակցելու ÿքաղաքի գրավման օպերացիային[10]: Հունվարի 22-ին գունդը տեղակայվում է Էկիբատ գյուղում, իսկ հունվարի 24-ին՝ Հասան Կալեում[11]՝ որպես բանակային պահեստազոր[12]: Էրզրումի գրավման օրը՝ 1916 թ. փետրվարի 2-ի լույս 3-ի գիշերը, VI գունդը մտնում է քաղաք: Գնդապետ Մ. Սիլիկյանը նշանակվում է Էրզրումի զինվորական պարետ[13]: Քաղաք մտնելուց անմիջապես հետո գնդի անձնակազմը ձեռնամուխ է լինում դասալիքների և կողոպտիչների հայտնաբերմանն ու ձերբակալմանը, հրդեհների մարմանը և հրետանային ու համբարակային պահեստները հսկողության տակ վերցնելուն, պարեկապահակային ծառայության[14]: Գեներալ Պ. Կալիտինի առաջին հրամաններից մեկը Մ. Սիլիկյանին լինում է այն, որ նա արգելի հայերի մուտքը Էրզրում[15]: Գեներալի նման վերաբերմունքը բացատրվում է հայերի նկատմամբ ունեցած անբարյացկամությամբ: Կարծում ենք, որ դա էլ իր դերն է խաղացել, սակայն կար նաև այլ հիմնավոր պատճառ: Հավանաբար, կորպուսի հրամանատարին հետաքրքրել էր Էրզրումի Ս. Աստվածածին եկեղեցում երիտթուրքական իշխանությունների կողմից հայերից կողոպտված գույքը, որի զգալի մասը չէին հասցրել դուրս տանել: Առաջինն այդ մասին տեղեկանում է գնդապետ Մ. Սիլիկյանը, որը շտապում է հեռագրել Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանին՝ խնդրելով ուղարկել մի վստահելի անձ, որը կտնօրինի հայերին պատկանող գույքը[16]:

1916 թ. մարտի վերջին Մ. Սիլիկյանի գունդը տեղակայվում է Բիթլիսում (Բաղեշ), իսկ ապրիլի սկզբին հրաման է ստանում քաղաքում թողնել երկու գումարտակ և մեկ գումարտակով ու լեռնային չորս թնդանոթով շարժվել Մուշ, քանի որ վերջինիս ուղղությամբ շարժվում էին թուրքական Դարդանելյան VII և VIII դիվիզիաները[17]: Մ. Սիլիկյանը նշանակվում է Մուշ քաղաքի կայազորի պետ:

Շուտով Մուշ են գալիս Կովկասի հայոց բարեգործական ընկերության աշխատակիցներ Կարո և Արմեն Սասունիներն ու Հմայակ Մանուկյանը ողջ մնացած բնակչությանն օգնություն ցույց տալու և քրդական գերությունից հայերին ազատելու

---

[9] *Նույն տեղում, գ. 9, թ. 21 շրջ.:*
[10] *Նույն տեղում, գ. 10, թ. 9:*
[11] *Նույն տեղում, թ. 11 շրջ.:*
[12] *Նույն տեղում, թ. 9:*
[13] *Նույն տեղում, թ. 11 շրջ.:*
[14] *Նույն տեղում, թ. 12:*
[15] *Նույն տեղում:*
[16] *Նույն տեղում, թ. 12:*
[17] *Նույն տեղում, գ. 9, թ. 28 շրջ.–29:*

համար: Կ. Սասունին առաջարկում է ռուսական հրամանատարությանը՝ գեներալ Զ. Մդիվանիին, թույլատրել Խնուսում հայերից կազմակերպել աշխարհազորային-ինքնապաշտպանական խմբեր՝ միլիցիա: Նրանք ոչ միայն կպաշտպանեին բնակչությանը քրդական հարձակումներից, այլև կիրականացնեին ռուսական բանակի հաղորդակցության ուղիների հսկումը և կհետախուզեին հակառակորդի դիրքերը: Սակայն գեներալ Զ. Մդիվանին թույլատրում է զբաղվել զուտ գաղթականական գործերով: Գնդապետ Մ. Միլիկյանի խորհրդով՝ նույն խնդրանքով Կ. Սասունին դիմում է 66-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ Ի. Սավիցկուն[18]: Վերջինիս անմիջական օգնությամբ Կ. Սասունին ստանում է զենք, զինամթերք, հագուստ և պարեն: Զենքը տրվում է սասունցիներից և մշեցիներից կազմված մարտական խմբերին, որոնք իրականացնում են որոնողական, հետախուզական և մարտական գործողություններ: Ստացված տեղեկությունները հաղորդվում են Մ. Միլիկյանին[19]:

Մ. Միլիկյանի հրամանատարության ներքո գործել է Դրոյի (Դրաստամատ Կանայան) ենթակայության տակ գտնվող Հայկական II կամավորական խումբը, որը գնդապետին խորը հիացմունք և հարգանք էր պատճառել իր մարտական պատրաստվածությամբ, քաջությամբ ու կարգապահությամբ: Խորհրդային տարիներին գեներալ Թ. Նազարբեկյանին գրած մի նամակում Մ. Միլիկյանը հետևյալ գնահատականն է տվել Դրոյի խմբին. «Դրոյի դրուժինան՝ դա փառահեղ դրուժինա է, Հայաստանի հպարտությունն ու գեղեցկությունն է»[20]: Իսկ 1928 թ. Նազարբեկյանին գրած նամակներից մեկում Մ. Միլիկյանը հետևյալն է հաղորդել. II խմբի կատարած քաջագործությունների մասին ինքը գրել է Կովկասյան IV բանակային կորպուսի հրամանատարությանը և Դրոյին ու աչքի ընկած մարտիկներին ներկայացրել է Գեորգիևյան խաչով պարգևատրելու համար: Ինչպես վկայում է Մ. Միլիկյանը. «Հետագայում ես իմացա, որ նրանք (կորպուսի հրամանատարությունը– Ռ. Ս.) մերժել է այդ պարգևները և խնդրել այլևս ներկայացումներ չանել»[21]:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Մ. Միլիկյանը նշանակվում է Վանի ջոկատի հրամանատար: Ջոկատը կազմված էր երեք շարային գնդերից[22]: Որոշ ժամանակ անց նա նշանակվում է բրիգադի հրամանատար[23]: Օգոստոսի 22-ին Մ. Միլիկյանին շնորհվում է գեներալ-մայորի կոչում[24]: Մինչև 1918 թ. հունվարը Մ. Միլիկյանը գտնվել է Վանում, ապա Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի հրամանով այլ հայ սպաների հետ գալիս է Թիֆլիս, որտեղ Հայկական կորպուսի հրամանատար գեներալ

[18] Կ. Սասունի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914–1918), Պեյրութ, 1966, էջ 120–121:
[19] Նույն տեղում, էջ 121:
[20] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 22, թ. 9:
[21] Նույն տեղում, թ. 9 շրջ.:
[22] ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 1124, թ. 7:
[23] Նույն տեղում, թ. 7 շրջ.:
[24] Գ. Ավետիսյան. Նշվ. աշխ., էջ 181:

Թ. Նազարբեկյանի հրամանով Մ. Սիլիկյանը նշանակվում է II հրաձգային դիվիզիայի հրամանատար[25]:

Քանի որ հայ պատմագրությունը մանրամասն լուսաբանել է 1918 թ. Մայիսյան ճակատամարտերը և հատկապես Սարդարապատի հերոսամարտի ժամանակ Մ. Սիլիկյանի դերակատարումը, ուստի ձեռնպահ կմնանք լուսաբանելու նշված մարտական գործողությունը[26]:

1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով հայկական զինուժը չպետք է գերազանցեր մեկ դիվիզիայից: Գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանի հուլիսի 26-ի թիվ 99 հրամանի համաձայն՝ Առանձին հայկական դիվիզիայի հրամանատար է նշանակվում գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը[27]:

1919 թ. մարտի 25-ին ստեղծվում է ՀՀ բանակի ռազմական խորհուրդ, որի նախագահ է նշանակվում գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը: Ապրիլի 24-ին, ի թիվս այլոց, խորհրդի անդամ է նշանակվում Մ. Սիլիկյանը[28]: Հունիսի 1-ին Մ. Սիլիկյանին շնորհվում է գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում:

1918 թ. դեկտեմբերին սկսվում է վրաց-հայկական պատերազմը[29]: Գեներալ Մ. Սիլիկյանին է հանձնարարվում մարտական գործողությունների ընդհանուր հրամանատարությունը[30]: Նա պետք է հսկողության տակ վերցներ մինչև Խրամ գետը տանող շրջանը: Գետը հանդիսանալու էր հայ-վրացական սահմանը[31]:

1920 թ. ապրիլին Մ. Սիլիկյանը նշանակվում է Նոր Բայազետ և Դարալագյազ գավառների գեներալ-նահանգապետ: Նա միաժամանակ վարել է Նոր Բայազետ գավառում տեղակայված զորքերի շտաբի պետի պաշտոնը[32]: Ինչպես պարզաբանել է Մ. Սիլիկյանը 1935 թ. նոյեմբերի 29-ին ՆԳԺԿ քննիչ Իսրայելյանին, իր նշանակման բուն նպատակն էր աջակցել Դրոյի հրամանատարության ներքո գտնվող ջոկատին անցնել Լեռնային Ղարաբաղ՝ տեղի հայ բնակչությանն ադրբեջանական բանակի դեմ մղվող պայքարում օգնելու համար[33]:

---

[25] *Նույն տեղում:*

[26] *Մ. Սիլիկյանի ժամանակակիցը՝ Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), հետևյալ կերպ է նկարագրել զորավարին. «Սա (Մ. Սիլիկյանը – Ռ. Ս.) կարճահասակ, համեստ ու բարի դեմքով, հայերեն չգիտցող, բայց մի օրինակելի հայ մարդ էր»: Ա-Դոն, ի նկատի ունենալով Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերի երեք գլխավոր դեմքերին՝ գեներալ Մ. Սիլիկյանին, գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանին և Դրոյին, նրանց անվանում է «սուրբ երրորդություն». Ա-Դո. Հայության երկունքը, էջ 463–464. տե՛ս Տեր-Մարտիրոսյանների ընտանեկան արխիվ:*

[27] *Կ. Հարությունյան. Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թվականներին, Երևան, 2002, էջ 19:*

[28] *Նույն տեղում, էջ 22:*

[29] *Ավելի մանրամասն տե՛ս Կ. Սարդարյան. Հայ-վրացական հարաբերությունները 1918–1921 թթ., Երևան, 2002, Վ. Հ. Վիրաբյան. 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Երևան, 2003, էջ 137–208, Կ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 55–60:*

[30] *Կ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 57:*

[31] *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 1124, թ. 8:*

[32] *Տե՛ս Հ. Հարությունյան. 1920 թ. մայիսյան ապստամբությունը Նոր Բայազետ գավառում.–ՊԲՀ, 2011, -3, էջ 84:*

[33] *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 1124, թ. 8 շրջ.:*

Նոր Բայազետում զգալի էր բոլշևիկյան ազդեցությունը: Նրանք, օգտվելով ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր դրությունից, հակակառավարական ակտիվ քարոզչություն են տանում բնակչության և հատկապես զինվորների շրջանում: Մ. Միլիկյանից ու նրա շտաբից աննկատ չեն մնում բոլշևիկների ակտիվությունը: Գեներալը տեղեկանալով, որ բոլշևիկ Հովհաննես Սարուխանյանը հակապետական լայն քարոզչություն է ծավալել՝ նրան արտաքսում է գավառից[34]: Սակայն մայիսի 7-ին Հ. Սարուխանյանը, չնայած արգելքին, վերադառնում է Նոր Բայազետ: Պատմաբան Համլետ Հարությունյանը, վկայակոչելով բոլշևիկյան մամուլը և արխիվային փաստաթղթերը, նշում է, որ Հ. Սարուխանյանն, արհամարհելով «գեներալի (Մ. Միլիկյանի – Ռ. Ս.) սպառնալիքները և առատաձեռն խոստումները», հետևյալն է հայտարարել. «Կոմունիստները երբեք չեն նահանջում իրենց գաղափարներից և ոչ մի դեպքում չեն կատարում թշնամու թելադրանքները»[35]:

Մայիսի 10-ին Մ. Միլիկյանը Ղարանլուղ (Մարտունի) գյուղում հանդիպում է Հ. Սարուխանյանին, որը հակապետական քարոզչություն էր ծավալել բնակավայրում տեղակայված հայ զինվորների շրջանում[36]: Հավանաբար, Մ. Միլիկյանը փորձել է անձնական հանդիպման ժամանակ համոզել բոլշևիկ քարոզչին դադարեցնել հակակառավարական քարոզչությունը և գործն արյունահեղության չհասցնել: Որպես գեներալ-նահանգապետ՝ Մ. Միլիկյանն ուներ բոլոր հնարավորությունները Հ. Սարուխանյանին ձերբակալելու համար: Գեներալը, սակայն, չի դիմում կտրուկ միջոցների, որը հնարավորություն է տալիս Հ. Սարուխանյանին 300 զինվորների գլուխն անցած մայիսի 12-ին մտնել Ղարանլուղ և ձերբակալել մի քանի սպաների, այդ թվում՝ Մ. Միլիկյանին: Վերջինիս կալանումը կատարվում է Հ. Սարուխանյանի անմիջական մասնակցությամբ: «Աշխատավոր» թերթը հետևյալն էր գրում. Մ. Միլիկյանի այն հարցին, թե՝ «չէ՞ որ դուք ինձ ազնիվ խոսք տվեցիք բանակին ձեռք չտալ պ. Սարուխանյան», վերջինս պատասխանել է. «Ես այն ժամանակ ձեզ ստեցի, ընկեր Միլիկյան»[37]:

Մայիսի 19-ի կեսօրին կառավարական զորքը մտնում է Նոր Բայազետ և բանտից ազատում է կալանված բոլոր սպաներին[38]:

...1921թ. սեպտեմբերին աքսորից վերադառնալուց հետո Մ.Միլիկյանը հաստատվում է Երևանում և աշխատանքի անցնում շվեդական «Բալթիկ» բաժնետիրական ընկերության Ալեքսանդրապոլի(Գյումրի)մասնաճյուղում՝որպես հաշվապահ և վաճառող[39]:Ընկերությունում Մ.Միլիկյանն աշխատում է 1,5 տարի և 1923թ. ծառայության է անցնում «Մերձավոր

---

[34] *Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. հոդվ., էջ 84:*

[35] *Նույն տեղում, էջ 85:*

[36] *Նույն տեղում:*

[37] *Նույն տեղում, էջ 86:*

[38] *Նույն տեղում, էջ 89: 1935 թ. նոյեմբերի 29-ի ՀԽՍՀ ՆԳԺԿ պետական անվտանգության վարչությունում հարցաքննության ժամանակ Մ. Միլիկյանը պարզաբանել է իր ազատման մանրամասները: Նա հայտնել է, որ իր բանտախցիկի դուռը բաց է եղել, և ինքը դուրս գալով՝ թաքնվել է գյուղացիներից մեկի տանը (տե՛ս ՀԱԱ,ֆ.1191,ց.1,գ.1124, թ. 9):*

[39] *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 1124, թ. 14 շրջ.:*

Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեում» կամ Ամերկոմում[40], որտեղ աշխատում է մինչև 1929 կամ 1930 թ.: Կոմիտեն զգալի դեր է ունենում հայ գաղթականության և հատկապես որբ երեխաների փրկության գործում:

Գեներալ Թ. Նազարբեկյանի անձնական արխիվում պահպանվել են Մ. Սիլիկյանի մի քանի նամակ, ինչպես նաև մեզ չհասած նամակներից արված քաղվածքներ: Թ. Նազարբեկյանը, որը բնակվում էր Թիֆլիսում, նախաձեռնել էր հուշագրություն, որը վերաբերում էր Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացած մարտական գործողություններին, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերին[41]: Մի շարք օպերացիաների, դեպքերի և անձերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ու ճշտումներ կատարելու համար գեներալը դիմել է Մ. Սիլիկյանին՝ խնդրելով օժանդակել այդ խնդրում: Վերջինս օգնել կամ հուշել է, թե ում պետք է դիմել:

Տեղեկանալով, որ Թ. Նազարբեկյանը քաղվածքներ է կատարում իր նամակներից, Մ. Սիլիկյանը պատրաստակամություն է հայտնում իր վրա վերցնել այդ աշխատանքը՝ խնդրելով իրեն ուղարկել այդ նամակներն ու նյութերը: Նա գրում է. «Ես կկազմեմ մանրամասն գրություն և այդ ամենն ողջ նյութի հետ կուղարկեմ Ձեզ՝ Ձեր գրառումների համար: Շատ ուրախ կլինեմ այդ գործում Ձեզ օգնելու համար»[42]:

1927 թ. Մ. Սիլիկյանը ձերբակալվում է անվտանգության մարմինների կողմից, որը չկարողանալով ապացուցել առաջադրված մեղադրանքները՝ օգոստոսին վարչական կարգով նրան աքսորում է Դոնի Ռոստով: Նույն թվականի հոկտեմբերին նրան թույլատրվում է վերադառնալ Երևան[43]: 1935 թ. նոյեմբերի 25-ին Մ. Սիլիկյանը կրկին ձերբակալվում է: Ձերբակալման և բնակարանի՝ Սվերդլովի 99 (այժմ՝ Բուզանդ), խուզարկության հրամանը ստորագրողների թվում է Անդրֆեդերացիայի ՆԳԺԿ վարչության պետ Խ. Մուղդուսին (Խաչատուր Աստվածատրյան)[44]: Գեներալն ամբաստանվել է միապետական հայացքների և նախկին դաշնակցական Հռիփսիմե Մուշեղյանի հետ կապ ունենալու համար: Մ. Սիլիկյանին հարցաքննող քննիչ Իսրայելյանը հայտնել է, որ Հռիփսիմեի ամուսինը ծառայել է նախկին ՀՀ-ի հակահետախուզությունում[45]: Քննիչը պահանջում է, որպեսզի Մ. Սիլիկյանը հաստատի, որ «Բալթիկ» ընկերության աշխատակից Գևորգ Քրմոյանն իրեն 1922 թ. հայտնել է, որ նախկին ՀՀ կառավարությունը նախատեսում է վերականգնել իշխանությունը Հայաստանում և կազմել է կառավարություն, որտեղ Մ. Սիլիկյանը վարելու է զինվորական նախարարի պաշտոնը: Գեներալը կտրականապես հերքում է դա՝ ավելացնելով,

---

[40] *Նույն տեղում, թ. 37:*

[41] *Հուշագրության մի մասը տպագրվել է. տե՛ս* Армянский корпус против турецких войск (ноябрь 1917 г.– июль 1918 г.). Воспоминания генерала Ф. И. Назарбекова. Сост. Г. М. Шатирян, ред. Г. А. Аветисян.– «Вестник архивов Армении», 1992, ¹ 3, с. 34–153.

[42] *ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 98:*

[43] *ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 1124, թ. 38:*

[44] *Նույն տեղում, թ. 3:*

[45] *Նույն տեղում, թ. 10:*

որ նման հնարավորություն եղել է 1919 թ., սակայն ինքը հրաժարվել է[46]*:*

1936 թ. հունվարի 23-ի հարցաքննության ժամանակ Մ. Միլիկյանը հայտնում է, որ մինչև 1928 թ. նամակագրություն է ունեցել Թ. Նազարբեկյանի հետ, իսկ Հ. Մուշեղյանի հետ ծանոթ է եղել Կարսից, որտեղ նրա եղբայրն ունեցել է լուսանկարչատուն[47]*: Այդ տիկնոջ հետ հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել Վանում, որտեղ նա աշխատել է սանիտարական լազարեթում*[48]*, իսկ Ամերկոմում ծառայելիս ծանոթացել է Վարազդատ Տերոյանի հետ: Մ. Միլիկյանը հերքել է, որ վերը նշված անձանց հետ վարել է հակախորհրդային և հակապետական բնույթի զրույցներ, ինչպես օրինակ՝ «Իրանում երբեք խորհրդային իշխանություն չի հաստատվի»*[49]*: Քննիչի հարցին, թե՝ ո՞վ է Տյոմա Միլիկովը, գեներալը պատասխանում է, որ նա իր հորեղբոր տղան է՝ Արտյոմը, նախկին ռուսական բանակի Գլխավոր շտաբի սպա: Նա ծառայել է գեներալ Ա. Դենիկինի բանակում, ապա վտարանդվել է արտասահման*[50]*:*

1936 թ. հունվարի 26-ի հարցաքննության ժամանակ Մ. Միլիկյանը կրկին պնդում է, որ իրեն մեղավոր չի համարում[51]*:*

1936 թ. փետրվարի 27-ի որոշման մեջ ՆԳԺԿ-ի քաղաքական գաղտնի բաժնի լիազոր Ջամջյանը, ուսումնասիրելով Մ. Միլիկյանի դեմ հարուցված թիվ 4061 գործը, եկել է եզրակացության, որ բոլոր մեղադրանքները հետաքննությունն ապացուցել է: Լիազորը, սակայն, հաշվի առնելով Մ. Միլիկյանի տարիքը (74 տարեկան), որոշում է նրան ազատել կալանքից՝ Երևանից չբացակայելու պայմանով, մինչև որ ԽՍՀՄ ՆԳԺԿ Հատուկ խորհրդակցությունը չընդունի համապատասխան որոշում[52]*: Փետրվարի 29-ին Մ. Միլիկյանը պարտավորագիր է գրում Երևանից չբացակայելու մասին և ազատ է արձակվում*[53]*:*

Մարտի 16-ին ՀԽՍՀ դատախազի տեղակալ Միքայելյանը, քննելով Միլիկյանի դեմ հարուցված մեղադրանքները, առանձնացրել է հետևյալները.

1. Նոր Բայազետում կոմունիստներին հետապնդելը,

2. 1921 թ. աքսորից վերադառնալուց հետո «գերմանոֆիլ» Վ. Տերոյանի հետ ունեցած մտերիմ հարաբերությունները,

3. դաշնակցական ընդհատակյա կազմակերպության Կենտրոնական կոմիտեի անդամ Հ. Մուշեղյանի հետ հանդիպելը:

Քննելով վերը նշված հարցերը՝ Միքայելյանը եզրակացնում է, որ Միլիկյանի դեմ հարուցված մեղադրանքներն ապացուցված են և քրեական գործը պետք է հանձնել ՆԳԺԿ Հատուկ խորհրդակցությանն առանց դատական կարգի[54]*:*

---

[46] *Նույն տեղում, թ. 15 և շրջ.:*
[47] *Նույն տեղում, թ. 17:*
[48] *Նույն տեղում, թ. 10:*
[49] *Նույն տեղում, թ. 19:*
[50] *Նույն տեղում, թ. 18:*
[51] *Նույն տեղում, թ. 35:*
[52] *Նույն տեղում, թ. 39:*
[53] *Նույն տեղում, թ. 40:*
[54] *Նույն տեղում, թ. 41–42:*

Ապրիլի 5-ին, սակայն, պետական անվտանգության լեյտենանտ Սարկիսովը, քննելով Սիլիկյանի դեմ հարուցած մեղադրանքները, եզրակացրել է, որ դրանք ապացուցվել են մասնակիորեն, ուստի պետք է գործը կարճել՝ հանձնել արխիվ և Երևանից չբացակայելու որոշումն համարել անվավեր[55]:

Ցավոք, Մ. Սիլիկյանը երկար չմնաց ազատության մեջ. 1937 թ. նա ձերբակալվում է չորրորդ անգամ: Նոյեմբերի 16-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակը գեներալին դատապարտում է մահապատժի, որն ի կատար է ածվում նոյեմբերի 22-ին[56]:

Պարզելու համար նման անհեթեթ որոշման պատճառը, մեր կողմից ուսումնասիրվել են նախկին ՀԽՍՀ պետական անվտանգության կոմիտեի արխիվից Հայաստանի ազգային արխիվ հանձնած և բռնադատվածներին վերաբերող քրեական մի շարք գործեր: Դրանցից մեկում, որը վերաբերում էր խորհրդային զինծառայող Սարգիս Գևորգի Ջանոյանին, գտանք հիշատակություն Մ. Սիլիկյանի մասին:

Ս. Ջանոյանը եղել է ռուսական բանակի հրետանու ենթասպա, մասնակցել է ռուս-թուրքական ռազմաճակատի մարտական գործողություններին, պարգևատրվել է շքանշաններով, իսկ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ծառայության է անցել Կարմիր բանակում՝ Հայկական դիվիզիայում[57]: Հետաքննության նյութերից «պարզվում» է, որ Ս. Ջանոյանը, գեներալներ Ք. Արարատյանը և Մ. Սիլիկյանը եղել են «հակահեղափոխական սպայական կազմակերպության» անդամներ[58]: Ըստ ՆԳԺԿ-ի ունեցած «հավաստի» փաստերի՝ վերը նշված զինվորականները եղել են 1936 թ. Բելոռուսական ռազմական օկրուգի նախկին հրամանատար Ի. Ուբորևիչի կազմակերպած հակախորհրդային, «սպայական-ֆաշիստական» կազմակերպության անդամներ: ՆԳԺԿ-ի հորինած այս քրեական գործը հայտնի էր «Տուխաչևսկու գործ» անունով: Նշենք, որ այդ անհեթեթ ամբաստանությունների հիման վրա ձերբակալվել և գնդակահարվել են Խորհրդային Միության մարշալ Մ. Տուխաչևսկին, Կիևյան ռազմական օկրուգի հրամանատար Ի. Յակիրը, Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի պետ Ա. Կորկը և շատ ուրիշներ:

Ս. Ջանոյանի քրեական գործի նյութերի քննությունից երևում է, որ Մ. Սիլիկյանը հարցաքննվել է միայն մեկ անգամ՝ 1937 թ. սեպտեմբերի 22-ին: Քննիչին տված ցուցմունքում նա հայտնել է, որ եղել է ցարական բանակի գեներա լ- մայոր, և որպես գեներալ - լեյտենանտ ծառայել է «դաշնակցական» բանակում ու վարել է Նոր Բայազետի գեներալ - նահանգապետի պաշտոնը: Մ. Սիլիկյանը, այսպես կոչված, «սպայական գաղտնի կազմակերպությանը» մասնակից լինելու վերաբերյալ չի հարցաքննվել[59]: Գաղտնի կազմակերպության անդամ լինելու «փաստը» արդեն բավական է եղել, որպեսզի

---

[55] *Նույն տեղում, թ. 43:*
[56] *Նույն տեղում, գ. 1125, թ. 16, 19:*
[57] *Նույն տեղում, ց. 3, գ. 1819, թ. 29:*
[58] *Նույն տեղում, թ. 55:*
[59] *Նույն տեղում, թ. 58:*

Եռյակն անմիջապես մահապատժի վճիռ ընդունի և գնդակահարության դատապարտի անմեղ մարդկանց:

Հայտնի է, որ 1937 թ. լայն ծավալ էին ստացել ստալինյան բռնությունները: Պատժիչ մեքենան գործում էր ողջ թափով, և պետական անվտանգության մարմինները ցանկանում էին ամեն գնով ապացուցել իրենց հավատարմությունը կոմկուսին ու անձամբ Ի. Ստալինին, ուստի ձերբակալում և կառափնարան էին ուղարկում նաև տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց: Պատահական չէ, որ քրեական գործի վրա կար հետևյալ մակագրությունը՝ ,ԿՍՐՈրՍՈ ցփպՑՈ - ոօՉՔՈԽպ սՆՊՈԽ[60]*:*

Հայկական բանակի գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանի բարի անունը վերականգվեց միայն 1987 թ. նոյեմբերի 10-ին, երբ ՀԽՍՀ Գերագույն դատարանը չեղյալ հայտարարեց ՆԳԺԿ-ի Եռյակի որոշումը[61]: Այս վճռի պատճառը եղել է Մ. Սիլիկյանի որդու՝ Գեորգիի դիմումը ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Վ. Չեբրիկովին[62]: Միաժամանակ Գ. Սիլիկյանը խնդրել է հայտնել հոր մահվան հանգամանքները, տարեթիվը և վայրը:

1988 թ. հունվարի 14-ին ՀԽՍՀ ՊԱԿ-ի նախագահ Մ. Յուզբաշյանը դիմում է ՀԽՍՀ արդարադատության նախարար Ա. Դաղայանին՝ խնդրելով հրահանգել, որպեսզի Երևանի Սպանդարյան շրջանի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում (ՔԿԱԳԲ) գրանցել Մ. Սիլիկյանի մահը, որը տեղի է ունեցել 1937 թ. նոյեմբերի 22-ին[63]:

Գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանը կիսեց ռուսական և ազգային բանակներում ծառայած տասնյակ հազարավոր սպաների դժբախտ ճակատագիրը: Հարկ է նշել, որ ճիշտ է բավականին ուշ, այնուամենայնիվ, պատմական արդարությունը հաղթեց: Հայ ժողովուրդը բարձր գնահատեց Մ. Սիլիկյանի ծառայությունը. այսօր գեներալի անունն են կրում թաղամաս Երևանում, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը սահմանել է զորավարի անունը կրող մեդալ:

---

[60] *Նույն տեղում, ց. 1, գ. 1124, թ. 38: Բառացի նշանակում է՝ օպերատիվ հաշվառման գործերի գունավորում՝ որակավորում: Պետական անվտանգության օպերատիվ աշխատակիցը, հիմք ընդունելով կասկածյալի արարքի կամ հանցանքի վտանգավորությունը, տվել է համապատասխան գունավորում՝ որակավորում կամ գնահատական: Նման որակավորման ցանկը սահմանվում էր ՆԳԺԿ-ի, իսկ հետագայում՝ ՊԱԿ-ի հատուկ հրամանով:*

[61] *Նույն տեղում, գ. 1125, թ. 16:*

[62] *Նույն տեղում, թ. 20:*

[63] *Նույն տեղում, թ. 19: 1988 թ. հունվարի 25-ին ՀԽՍՀ ՊԱԿ-ի X բաժնի պետ փոխգնդապետ Ե. Աթթարյանը դիմում է Ադրբեջանի ԽՍՀ գործընկերոջը՝ փոխգնդապետ Բ. Ջամբարովին, խնդրելով, որպեսզի Բաքու քաղաքի բնակիչ Գեորգի Սիլիկովին տեղեկացնի, որ հայրը 1937 թ. նոյեմբերի 16-ին դատապարտվել է պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության: Գ. Սիլիկովը հոր մահվան վկայականը կարող է ստանալ Երևանի Սպանդարյան շրջանի ՔԿԱԳԲ-ից: Փետրվարի 10-ին Բ. Ջամբարովը պատասխան գրությամբ հայտնում է, որ Գ. Սիլիկովը հրավիրվել է ՊԱԿ և նրան բանավոր տեղեկացվել է հոր մահվան հանգամանքների և մահվան վերաբերյալ տեղեկանք ստանալու հնարավորության մասին. տե՛ս նույն տեղում, թ. 20 և շրջ.:*

ГЕНЕРАЛ - ЛЕЙТЕНАНТ МОВСЕС СИЛИКЯН
(Неизвестные страницы биографии)

РУБЕН СААКЯН

Р е з ю м е

Генерал-майор русской, генерал-лейтенант армянской армии Мовсес Силикян (Моисей Силиков, 1862–1937), дворянин, по национальности удин, армяно-григорианского (апостольского) вероисповедания. Участник Первой мировой войны, с 1914 по 1917 гг. воевал на русско-турецком фронте. В начале войны был командиром 6-го стрелкового полка. После занятия русскими войсками крепости Эрзерум 3 февраля 1916 г. был назначен военным комендантом города. 22 августа 1917 г. был удостоен звания генерал-майора. Был назначен командиром Ванского отряда. Генерал-лейтенант Товмас Назарбекян поручил М. Силикяну формирование отдельной Армянской стрелковой дивизии. В мае 1918 г. командовал армянскими войсками во время Сардарапатского сражения, где турецкие войска потерпели сокрушительное поражение. 1 июня 1919 г. М. Силикяну было присвоено звание генерал-лейтенанта. В апреле 1920 г. он был назначен военным губернатором Нового Баязета. После советизации Армении был четыре раза арестован органами НКВД. В последний раз, 16 ноября 1937 г. был обвинен в антисоветском заговоре и участии в подпольной организации бывшего командующего Белорусским военным округом И. Уборевича. Постановлением тройки НКВД Армянской ССР был приговорен к высшей мере наказания – расстрелу. В 1987 г. посмертно был реабилитирован.В честь М. Силикяна назван квартал в г. Ереване, Министерством обороны Республики Армения была учреждена медаль.

LIEUTENANT-GENERAL MOVSES SILIKYAN
(Unknown pages of biography)

RUBEN SAHAKYAN

S u m m a r y

Movses Silikyan (Moisey Silikov, 1862 – 1937) major-general of the Russian and lieutenant-general of the Armenian armies, a person of noble rank, ethnic Udi, member of Gregorian Armenian (Apostolic) faith. Taking part in World War I, he fought at the Russian-Turkish front in 1914–1917. At the beginning of the war he was the Commander of the 6th Infantry Regiment. After the Russian troops had seized the Erzerum fortress on February 3, 1916 he was appointed the commandant of the city. On August 22, 1917 he was promoted to the rank of major-general. He was appointed the commander of the Van troop. Lieutenant-General Tovmas Nazarbekyan charged him with the task of organization of a separate Armenian Infantry Division. In May 1918

he commanded the Armenian troops at the battle of Sardarapat, where the Armenian military scored a crucial victory against Turkish forces. On June 1, 1919 M. Silikyan was promoted to the rank of lieutenant-general. In April 1920 he was appointed Military Governor of New Bayazet. After the Sovietization of Armenia he was four times arrested by NKVD. At the last arrest on November 16, 1937 he was charged with Anti-Soviet plot, as well as conspiracy organized by the ex-commander of the Byelorussian Military District I. Uborevich. By the decision of NKVD Troika of Armenian SSR he was sentenced to execution by a firing squad. In 1987 he was granted posthumous rehabilitation. A district in Yerevan was named in his honor. RA Defense Ministry has endowed a medal.